ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ 2013-2014 ՈՒՍՏԱՐՎԱ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՕԼԻՄՊԻԱԴԱՅՆԵՐԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՓՈՒԼԻ ՀԱՋՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հանրապետական օլիմպիադայում Լոռու մարզից «Մաթեմատիկա» առարկայից բարձր արդյունքներ են գրանցվել:

Արդեն հայտնի են «Մաթեմատիկա» առարկայից հանրապետական օլիմպիադայի արդյունքները: Մեր մարզից «Մաթեմատիկա»-ից հանրապետական փուլին մասնակցում էր 22 աշակերտ, որոնցից 3-ը մրցանակային տեղեր են զբաղեցրել, իսկ 2-ը ստացել են գովասանագրեր:

Առաջին կարգի դիպլոմի է արժանացել Վանաձորի թիվ 11 ավագ դպրոցի 12-րդ դասարանի աշակերտ Գևորգ Մնացականյանը, իսկ Վանաձորի մաթեմատիկայի և բնագիտական առարկաների խորացված ուսուցմամբ հատուկ դպրոցի («Էվրիկա») 12-րդ դասարանի աշակերտ Հակոբ Մարտիրոսյանը և թիվ 11 ավագ դպրոցի 12-րդ դասարանի աշակերտ Արմեն Աբովյանն արժանացել են 3-րդ կարգի դիպլոմի: Գովասանագրերի են արժանացել «Էվրիկա» դպրոցի 8-րդ և 9-րդ դասարանի աշակերտուհիներ Լուսինե Ղազարոսյանը և Գիսանե Թովմասյանը:

Արդեն կայացել են նաև դպրոցական օլիմպիադաների հանրապետական փուլերը «Ֆիզիկա» և «Քիմիա» առարկաներից, որոնց արդյունքների մասին կտեղեկացնենք թերթի հաջորդ համարում:

Ամփոփվել են «Ֆիզիկա» եւ «Քիմիա» առարկաների հանրապետական փուլի արդյունքնեեռ:

Արդեն հայտնի են «Ֆիզիկա» և «Քիմիա» առարկաներից դպրոցական հանրապետական օլիմպիադայի արդյունքները: «Ֆիզիկա»-ից երրորդ կարգի դիպլոմի է արժանացել «Էվրիկա» դպրոցի 11-րդ դասարանի աշակերտուհի Աշխեն Քոչարյանը:

«Քիմիա» առարկայից, համապատասխանաբար, առաջին, երկրորդ և երրորդ կարգի դիպլոմների են արժանացել «Էվրիկա» դպրոցի աշակերտներ Արտակ Սաղյանը (9-րդ դասարան), Օլգերտ Դալլաքյանը (12-րդ դասարան) և Արթուր Լալայանը (11-րդ դասարան): Գովասանագրերի են արժանացել նույն դպրոցի աշակերտներ Արտավազդ Համբարյանը (12-րդ դասարան), Արման Եղիազարյանը (10-րդ դասարան), Համլետ Խաչատրյանը (9-րդ դասարան) և Վանաձորի թիվ 17 ավագ դպրոցի աշակերտ Տիգրան Թովմասյանը (12-րդ դասարան):

Ամփոփվել են «Կենսաբանություն» առարկայի հանրապետական փուլի արդյունքները:

Արդեն հայտնի են «Կենսաբանություն» առարկայից դպրոցական հանրապետական օլիմպիադայի արդյունքները: Երկրորդ կարգի դիպլոմի է արժանացել Վանաձորի թիվ 4 հիմնական դպրոցի 9-րդ դասարանի աշակերտ Արգիշտի Կիրակոսյանը: Երրորդ կարգի դիպլոմի են արժանացել Վանաձորի «Էվրիկա» դպրոցի 10-րդ դասարանի աշակերտ Սուրեն Դավիթավյանը և թիվ 11 ավագ դպրոցի 12-րդ դասարանի աշակերտուհի Հռիփսիմե Աղաբաբյանը: Գովասանագրերի են արժանացել «Էվրիկա» դպրոցի աշակերտներ Աշխեն Քոչարյանը (11-րդ դասարան) և Արման Եղիազարյանը (10-րդ դասարան):

Ամփոփվել են «Ինֆորմատիկա», «Ռուսաց լեզու» եւ «Անգլերեն լեզու» առարկաների հանրապետական փուլի արդյունքները:

Արդեն հայտնի են «Ինֆորմատիկա», «Ռուսաց լեզու», «Անգլերեն լեզու» առարկաներից դպրոցական հանրապետական օլիմպիադայի արդյունքները:
«Ինֆորմատիկա» առարկայից գովասանագրի է արժանացել Վանաձորի թիվ 5 ավագ դպրոցի 12-րդ դասարանի աշակերտ Արեն Զոհրաբյանը:
«Ռուսաց լեզու» առարկայից Լոռու մարզի մասնակիցներից ութից երեքը մրցանակային տեղեր են զբաղեցրել, մեկն արժանացել է գովասանագրի: Երկրորդ կարգի դիպլոմների են արժանացել Վանաձորի թիվ 4 հիմնական դպրոցի 9-րդ դասարանի աշակերտուհի Աննա Խաչատրյանը և Վանաձորի թիվ 11 ավագ դպրոցի 12-րդ դասարանի աշակերտուհի Լեոնա Անանյանը: Երրորդ կարգի դիպլոմի է արժանացել Վանաձորի թիվ 11 ավագ դպրոցի 11-րդ դասարանի աշակերտուհի Անի Առաքելյանը, իսկ գովասանագրի՝ նույն դպրոցի 10-րդ դասարանի աշակերտուհի Սեդա Հակոբյանը:
«Աստղագիտություն» առարկայի հանրապետական օլիմպիադային Լոռու մարզից մասնակից չի եղել:
Օտար լեզուներից՝ ֆրանսերենից նույնպես մասնակից չենք ունեցել, իսկ գերմաներենից մասնակցած հինգ աշակերտներից ոչ մեկը մրցանակի կամ գովասանագրի չի արժանացել: Անգլերենից 3-րդ կարգի դիպլոմի է արժանացել Վանաձորի թիվ 11 ավագ դպրոցի 12-րդ դասարանի աշակերտուհի Անի Քեշիշյանը, գովասանագրի՝ թիվ 5 ավագ դպրոցի 12-րդ դասարանի աշակերտուհի Շուշանիկ Իսահակյանը:
Տեղեկացնենք նաև, որ «Կենսաբանություն» առարկայից 2-րդ կարգի դիպլոմի է արժանացել Վանաձորի թիվ 4 դպրոցի 9-րդ դասարանի աշակերտ Վոլոդյա Մազմանյանը, ում անունը դուրս է մնացել նախորդ լրատվությունից:

Ամփոփվել են «Աշխարհագրություն», «Հայոց լեզու» եւ «Հայ գրականություն» առարկաների հանրապետական փուլի արդյունքները:

Արդեն հայտնի են «Աշխարհագրություն», «Հայոց լեզու» և «Հայ գրականություն» առարկաների հանրապետական օլիմպիադայի արդյունքները: Աշխարհագրությունից երկրորդ կարգի դիպլոմի է արժանացել Վանաձորի թիվ 4 հիմնական դպրոցի 9-րդ դասարանի աշակերտ Վոլոդյա Մազմանյանը: Երրորդ կարգի դիպլոմների են արժանացել Դսեղի միջնակարգ դպրոցի 12-րդ դասարանի աշակերտուհի Լիանա Ղուլինյանը և Աքորու միջնակարգ դպրոցի 12-րդ դասարանի աշակերտուհի Նարինե Թաքոյանը: Գովասանագրերի են արժանացել Աքորու միջնակարգ դպրոցի աշակերտներ Արմինե Թաքոյանը (10-րդ դասարան), Մարիամ Պետրոսյանը (11-րդ դասարան), Օձունի թիվ 1 միջնակարգ դպրոցի 12-րդ դասարանի աշակերտուհի Հայկուշ Նալբանդյանը և Սարամեջի միջնակարգ դպրոցի 12-րդ դասարանի աշակերտուհի Շուշան Խաչատրյանը:

«Հայոց լեզու» առարկայից երկրորդ կարգի դիպլոմի է արժանացել Վանաձորի «Էվրիկա» դպրոցի 12-րդ դասարանի աշակերտուհի Արուսյակ Դանիելյանը, գովասանագրի է արժանացել ՎՊՄԻ հենակետային վարժարանի 12-րդ դասարանի աշակերտ Սարգիս Նիազյանը:

«Հայ գրականություն» առարկայից երկրորդ կարգի դիպլոմի է արժանացել Վանաձորի թիվ 10 ավագ դպրոցի 11-րդ դասարանի աշակերտուհի Նուշիկ Տեր-Մովսիսյանը, գովասանագրի է արժանացել Տաշիրի ավագ դպրոցի 10-րդ դասարանի աշակերտուհի Ելենա Սարգսյանը:

Ամփոփվել են «Պատմություն» եւ «Հայոց եկեղեցու պատմություն» առարկաների հանրապետական փուլի արդյունքները:

Արդեն հայտնի են «Պատմություն» և «Հայոց եկեղեցու պատմություն» առարկաներից դպրոցական հանրապետական օլիմպիադայի արդյունքները:

«Պատմություն» առարկայից մեր մարզից ոչ ոք մրցանակի և գովասանագրի չի արժանացել:

«Հայոց եկեղեցու պատմություն» առարկայից գովասանագրի է արժանացել Շահումյանի միջնակարգ դպրոցի 10-րդ դասարանի աշակերտուհի Սյուզաննա Ավանեսյանը:

Երկրորդ կարգի դիպլոմի են արժանացել Վանաձորի թիվ 18 միջնակարգ դպրոցի 8-րդ դասարանի աշակերտուհի Արփինե Մկրտչյանը, Սպիտակի թիվ 2 հիմնական դպրոցի 9-րդ դասարանի թիվ 2 միջնակարգ դպրոցի 9-րդ դասարանի աշակերտուհի Արփինե Բդոյանը և Օձունի թիվ 2 միջնակարգ դպրոցի 10-րդ դասարանի աշակերտուհի Ժաննա Հախինյանը:

«Նախնական զինվորական պատրաստություն» առարկայով ավարտվեց դպրոցական օլիմպիադաների հանրապետական փուլը:

Անհատական վարժություններում առաջին կարգի դիպլոմներ և պաշտպանության նախարարի կողմից անհատական նվեր՝ ժամացույց են ստացել Վանաձորի թիվ 25 հիմնական դպրոցի 8-րդ դասարանի աշակերտ

Վահան Նազարյանը, Վանաձորի թիվ 13 ավագ դպրոցի 10-րդ դասարանի աշակերտ Արեն Ցուգունյանը, նույն դպրոցի 11-րդ դասարանի աշակերտ Իգոր Բոջուկյանը և Շիրակամուտի թիվ 1 միջնակարգ դպրոցի 11-րդ դասարանի թիվ 1 միջնակարգ դպրոցի 11-րդ դասարանի աշակերտ Սմբատ Մազմանյանը: Ընդհանուր հանրապետությունում երրորդ տեղն զբաղեցնելու համար կրթության նախարարության կողմից թիմի յոթ մասնակիցները՝ Վանաձորի թիվ 25 հիմնական դպրոցի աշակերտ Վահան Նազարյանը, Վանաձորի թիվ 5 ավագ դպրոցի 11-րդ դասարանի աշակերտ Արսեն Մազմանյանը, Վանաձորի «Էվրիկա» հատուկ դպրոցի 10-րդ դասարանի աշակերտ Սուրեն Դավիթավյանը, Վանաձորի թիվ 13 ավագ դպրոցի 10-րդ դասարանի աշակերտ Արեն Ցուգունյանը, Ագարակի միջնակարգ դպրոցի 11-րդ դասարանի աշակերտ Վահան Չոբանյանը, Շիրակամուտի թիվ 1 միջնակարգ դպրոցի 11-րդ դասարանի աշակերտ Սմբատ Մազմանյանը և Վանաձորի թիվ 13 ավագ դպրոցի 11-րդ դասարանի աշակերտ Իգոր Բոջուկյանն արժանացել են երրորդ կարգի դիպլոմների (ղեկավար՝ Վանաձորի թիվ 13 ավագ դպրոցի զինղեկ Հովհաննես Բաբայան):

Ընդհանուր առմամբ մեր մարզից դպրոցական հանրապետական օլիմպիադայից գովասանագրի է արժանացել 18 աշակերտ, երրորդ կարգի դիպլոմի՝ 17-ը, երկրորդ կարգի դիպլոմների է արժանացել 12 և առաջին կարգի դիպլոմի՝ 6 աշակերտ: